195 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20 **1899** ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20 № 195

ՔԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրություն ընդունվում է ամեն լեզուով.

Բաժանորդագրությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է որոնել պատճառը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դատաստանական դահլիճից. Նամակ Սղնախից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հասարակական հոսանքներ։

ՊԷՏՔ Է ՈՐՈՆԵԼ ՊԱՏՃԱՌԸ

Անդրկովկասի գործարանական ամենախոշոր շրջանը, Բաքուն իր շրջակայքով, գտնվում է մի ծանր տնտեսական դրութեան մէջ, որ յայտնի է Ապշերոնեան թերակղզու վաճառականոցում դրամական տագնապ անունով։ Բայց արդեօք դա միայն դրամակա՞ն տագնապ է, թէ նաև ուրիշ երևոյթների կուտակում—ահա մի հետաքրքիր հարց, որով պէտք է զբաղվէին բաքուցիները՝ պարզելու համար իրանց ներկայ վիճակը։ Անկասկած դրամական տագնապ, կամ փողի պակասութիւն տեղի ունի նաւթային շրջանում։ Բաքուից դուրս էլ ամեն տեղ ներկայումս փողի պակասութիւն է զգացվում, ամբողջ Ռուսաստանում և նոյն իսկ արտասահմանում։ բայց Բաքուն դրամական ճգնաժամ է ապրում նաև այն, որ ներկայանում է մեր առաջ իբրև անհեռատես, ոչ խելացի, երբեմն նոյն իսկ խարդախ գործավարութեան արգասիք։

Խնդրեմ ասացէք, մի՞թէ մի ձեռնարկութիւն, որ ունի միայն մի յիսուն հազար բուբլու արժողութիւն և որին վըստահանում են կրեդիտ բանալ երեքպատիկ և չորեքպատիկ քանակութեամբ, կարո՞ղ է գանգատվել փողի պակասութեան վրա, եթէ նա պահանջում է կէս միլիոնի կամ մէկ միլիոնի կրեդիտ և նրան չեն տալիս։ Իսկ Բաքուի մէջ շատ ձեռնարկութիւններ այդ տեսակ կրեդիտով են ցանկանում առաջ գնալ։ Արդիւնագործական տները այնպիսի պարտքերի մէջ են գցել իրանց, որ կարող են դուրս պրծնել նրանցից, եթէ իւրաքանչիւրի նաւթահողը տայ շատրուաններ և այն էլ առատ և երկարատև շատրուաններ։ Մի՞թէ դժուար էր նախատեսել, որ վերցրած անվերջ պարտքերին մի որոշ ժամանակամիջոցից յետոյ պէտք է համապատասխանեին նրանց վճարումները։

Վերջին ժամանակներս լսվում է մի կարծիք, որ Բաքուի դրամական տագնապի պատճառը արտասահմանեան տներն են, որոնք արդէն յետ են գնել իրանց նաւթահողերը և այժմ նաւթագործութեան ամբողջ եկամուտը տեղափոխում են արտասահման, զրկելով Բաքուն այդ գումարից։ Անկասկած, նաւթային արդիւնագործութեան մի նշանաւոր եկամուտը այդ ձևով հեռանում է մեր երկրից. բայց ներկայումս այդ հանգամանքը չէ Բաքուի դրամական տագնապի պատճառը։ Եթէ մի րոպէ ենթադրենք, որ օտար դրամատէրերը դադարեցնում են իրանց գործարանները և նաւթը թողնում են հողի տակ, այլ ևս չը փոխադրելով նրան արտասահման, մենք կը տեսնենք, որ այդպիսի վարմունքից փողի պակասութիւն չի վերացվի նաւթային շրջանից և նա կը շարունակի առաջ գնալ ուրիշ պատճառների ազդեցութեան տակ։

Բաքուի մէջ երկու տեսակ գործավարութիւն կայ. մի կողմից խելացի, մտածված, զգոյշ գործավարութիւն, միւս կողմից թեթևամիտ և երբեմն նոյն իսկ խարդախ գործավարութիւն։ Որքան հաճելի է, որ առաջին տեսակ գործունէութիւնը գտնի ամեն տեսակ աջակցութիւն, խրախոյս և պաշտպանութիւն, այնքան ևս ցանկալի է, որ երկրորդ տեսակ գործունէութիւնը շուտով քաշվի ասպարէզից և իր վտանգաւոր հետևանքներով չը վնասի առաջին տեսակ գործունէութեան, և դժբաղդութեան չը մատնի հազարաւոր մարդկանց նիւթական վիճակը։

Մենք հաւատում ենք, որ Բաքուի ձեռնարկութիւնների մեծ մասը, շնորհիւ նաւթահողերից շատերի լաւ յատկութեան, կը գտնեն աջող ելք ներկայ նեղ դրութիւնից, բայց անհրաժեշտ է, որ նաւթային շրջանի գործողները լաւ յիշէին ներկայ դասը և ապագայում զգուշանային թեթևամիտ քայլերից, աչքի առաջ ունենալով և այն, որ ամեն մի խոշոր արդիւնագործական տան քայքայումը պատճառ է դառնում և բազմաթիւ ուրիշ մարդկանց և հիմնարկութիւնների գործերի քայքայման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» մէջ հաղորդված էր, որ այս տարի էլ Վասպուրականում և այլ տեղերում սարսափելի կարօտութիւն կը լինի։ Ինչպէս երևում է, անցած ամառը իր անօրինակ երաշտով անագին տարածութիւններ է այրել, խորովել։ Սաստիկ վնասված է և Պարսկաստանը։ «Каспій» լրագիրը քաղուածքներ է բերում պարսկական լրագիրներից, որոնք միաբերան վկայում են, որ սովը Պարսկաստանում ընդհանուր կը լինի և, ի հարկէ, աւելի աղէտալի, քան ուրիշ տեղերում։ Համադան, Թէհրան, Թաւրիզ, Գիլան, Մազանդարան, Խորասան, Շիրազ, Սպահան այս բոլորին տագնապի մէջ են։ Քիւրդիստանում հաց չէ ճարվում։

Ազգաբնակութիւնը սոսկալի յուսահատ դրութեան մէջ է. անցեալ շաբաթ օր «սովի կրակը վառվեց աղքատների կրծքում» և սրանք, հաւաքվելով Աման-Ուլլահ խանի մզկիթի կուռը, սկսեցին քարկոծել կառավարչական տունը և հայհոյել կառավարչին։ Այսպէս հովացնելով իր սիրտը, ամբոխը գնաց չէյխ-իւլ-իսլամ Մօլլա Աբդուրազահի տունը և սպառնում էր նրան քարուքանդ անել, բայց բանիմաց չէյխ-իւլ-իսլամը կարգադրեց խլկոյն և եթէ փող ու ուտելիք բաժանել քաղցած ամբոխին և այդպէս ազատեց իրան և իր տունը վտանգից։ Գաւառներում անկարգութիւններ են անում զանազան քուրդ ցեղեր. նրանք կողոպտում են և բռնութիւնների են ենթարկում տեղացիներին, և խլում են նրանց բեռներն ու անասունները, երբ նրանք հազար ու մի նեղութիւններով անցնում են թիւրքաց սահմանը, և այնտեղից հաց են բերում։

Այսպէս են մեր հարևան երկիրները։ Եւ այս հանգամանքը աւելի ևս դժուարացնում է Անդրկովկասի դրութիւնը. յայտնի է, որ մենք էլ լաւ հունձ չունեցանք, յայտնի է որ հարաւային Ռուսաստանն էլ, որի հետ մենք մօտիկ յարաբերութիւն ունենք, նոյնպէս անբերրիութիւնից վնասված է։ Որտեղից պիտի հաց ստանայ մեր երկիրը։ Հարկ չը կայ կրկնելու, որ մենք դեռ ևս շարունակում ենք կատարեալ անհոգութեան մէջ քնել, մինչդեռ մեզ շրջապատող հանգամանքները բոլորովին քնացնող չեն։ Ահա ինչ է գրում «Тифлисскій Листокъ» լրագրի թղթակիցը Նուշուց.

Անդրկովկասում եղած անբերրիութեան հետևանքը կատարելապէս պարզված է։ Երկու նահանգ, Երևանի և Գանձակի, որոնք ամբողջ Անդրկովկասի շտեմարաններն են, կարօտ են հացի։ Խոտի պակասութիւնը մինչև այժմ անյայտ է եղել Անդրկովկասին, բայց այժմ գանձարանը ստիպված է չոր խոտ գնել Թիւրքիայի սահմաններում։ Էլի մի փաստ. կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը, ինտենդանտի վարչութեան ցանկութեան համաձայն, դիմել էլ կալուածատէրերին և առաջարկել էր դարի տալ մի քանի զօրաքաժիններին, բայց ոչ մի կալուածատէր յանձն չառաւ։ Այս ամենը ցոյց է տալիս ազգաբնակութեան տնտեսական կատարեալ անկումը անբերրիութեան պատճառով։ Աւելացրէք դրա վրա մի կողմից գիւղատնտեսութեան նահապետական ձևը, պապենական ժանգոտած գութանը, անգրագիտութիւնը, իսկ միւս կողմից հացատատիկ հաւաքողներին, որոնք մէկին երբեք գին են առնում, և կը պարզվի գիւղացի ազգաբնակութեան դրութեան կատարեալ պատկերը։ Ապագայի պատկերն էլ մռայլ է. անձրևներ չը կան, անօրինակ երաշտը ծածկել է արտերը խոր ճեղքերով։ Դեռ չեն սկսել վարը։ Մի քանի օր ևս—և գիւղացին յոյս չի ունենայ ապագայ հունձի վրա։

Այժմից իսկ գիւղացիները խմբերով դիմում են Բաքու աշխատանք գտնելու, բայց դա ոչինչ նշանակութիւն չունի, որովհետև գիւղացին իր աշխատածը Բաքուում էլ թողնում է։

Քանի ուշ չէ, պէտք է լրջութեամբ մտածել ապագայի մասին, որ միմիթարական բան չէ խոստանում։ Ժամանակ է, որ տեղացի ինտելիգենտ հասարակութիւնը զարթնէ և օգնէ սովածներին լայն չափերով, ինչպէս Ռուսաստանի հասարակութիւնը, սեփական նախաձեռնութեամբ, սեփական միջոցներով, և և ոչ թէ օգնութիւն սպասէ կառավարութիւնից։

Ժամանակ է, այո, վաղուց եկել է այդ ժամանակը։ Բայց ինչպէս զարթեցնել այդ «ինն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Աբոլիցիոնիզմ

I

Վերջերքս Ժընէվում կայացաւ Աբոլիցիոնիստների Միջազգային դաշնակցութեան ժողովը։

Ո՞վքեր են աբոլիցիոնիստները։

Եթէ դիմէք բառարաններին, նոյն իսկ ֆրանսիական և գերմանական հանրագիտական բառարաններին, նրանք ձեզ կասեն, թէ աբոլիցիոնիստ կոչվում են նեգրերի գերութեան վերացման կուսակիցները (abolir=ոչնչացնել, վերացնել)։ Բայց աբոլիցիոնիզմը այդ մտքով արդէն պատմական երևոյթ է դարձել, և նեգրերի մասին չէր խօսքը Ժընէվի ժողովում, այլ կին գերիների մասին, անառակութեան տներում բանտարկված և այդ տների գործակալների ձեռքով գնվող ու վաճառվող ողորմելի արարածների մասին։

Այդ գերութիւնն են ուզում վերացնել նոր աբոլիցիոնիստները յանուն բարոյականութեան, յանուն արդարութեան, յանուն անհատի ազատութեան և կին ու այր մարդու հաւասարութեան։

Պէտք է փակել անառակութեան տները, ասում են աբոլիցիոնիստները, որովհետև այդ տները իսկական բանտեր են, ուր հարստահարվում են ընկած, բայց այնուամենայնիւ մարդկային էակներ, և որովհետև այդ տներում տէրութեան գիտութեամբ, տէրութեան թոյլտուութեամբ, մինչև անդամ, կարելի է ասել, տէրութեան հովանաւորութեամբ կատարվում է ամենազզրելի առևտուրը, որ յայտնի է մարդկային ցեղին, տարածելով ժողովրդի մէջ այն հաժոզմունքը, թէ անառակութիւնը հասարակական անհրաժեշտութիւն է և մարմնավաճառութիւնը բնական երևոյթ։

Պէտք է վերացնել, պնդում են աբոլիցիոնիստները, նոյնպէս և «բարքերի ոստիկանութիւնը», որին իրաւունք է տրված, ըստ իր հայեցողութեան, 1) ձերբակալել ու պատժել բարոյապէս կասկածելի թող կանանց, միմիայն կանանց, մինչդեռ անառակ մարդիկ ազատ են մնում հսկողութիւնից և մինչդեռ ամենայետին մարդասպանի հետ վարվում են օրէնքի պահանջած որոշ կանոններով. 2) ենթարկել նրանց բժիշկների պաշտօնական քննութեան, որ մեռցնում է ամօթի վերջին նշոյլը նոր դայթակղված կնոջ մէջ և անմոռանալի խայտառակութիւն է դառնում թիւրիմացութեամբ կասկածված ազնիւ կնոջ համար, և 3) կասկածը հաստատվելու դէպքում, դատապարտել նրանց մշտական անառակութեան, տալով նրանց այն լրբութեան վկայականը, որ յայտնի է Ռուսաստանում դեղին տոմսակ անունով և որով կարծէք ոստիկանութիւնը ասում է թշուառ արարածին—«դու մեղանչել ես մի անգամ, ուրեմն դու պարտաւոր ես մեղանչել ամեն օր, քո ամբողջ կեանքի ընթացքում. դու ընկել ես, այժմ դու չես կարող այլ ևս բարձրանալ. դու վատ ես, աւելի ևս կը վատթարանաս. դու իջել ես մի քանի աստիճան դէպի անբարոյականութեան վիհը, դու կերթաս մինչև վերջը, մինչև յատակը, մինչև ծայրայեղ անամօթութիւնը և անասնականութիւնը. դու չես կրի այլ ևս մարդկային անունն, դու կը կոչվես այսուհետև դեղին տոմսաւոր կին և կը մեռնես այդ բարոյական ցեխի մէջ»։

Բայց թող խօսեն իրանք, աբոլիցիոնիստները։

«Արդեօք դեռ երկար ժամանակ պիտի տանի մեր դարը այնպիսի մի ամօթալի երևոյթ, ինչպէս սպիտակամորթ կանանց առևտուրը, նրանց վաճառումը անառակութեան մի տնից միւսը, նրանց բանտարկութիւնը լրբութեան Բաստիլներում».—գրում էր տարիներ առաջ իր «Pensées de Liberté»-ում կոմս Ա. դը Գասպարէնը, որ, եթէ չենք սխալվում, եռանդով մաքառել է նոյնպէս և նեգրերի ազատութեան համար։

«Ի՞նչ գերութիւն, ի՞նչ գերեվաճառութիւն, կասէք դուք անշուշտ, —բացականչում է տիկին Ա. դը Գասպարէն իր «La lèpre sociale»-ում։ —Մեզնում ոչ ոք չէ զբաղվում մարդ գնելով կամ վաճառելով։ Գերի, ոչ մի հատ չը կայ մեր երկրում. ով որ ոտք է դնում ազատ Եւրոպայի հողի վրա՝ ազատ է։ Մենք, փառք Աստծու, չը գիտենք թէ ինչ բան է մարդկային մարմնի վաճառանոց...»

«Բայց ես կասեմ ձեզ, շարունակում է հեղինակը, որ այս բոլորին, երբ ես գրում եմ, մարդկային մարմնի, մարդկային հոգու վաճառանոցներ բացարձակ գոյութիւն ունեն մեր քաղաքակիրթ երկիրների բոլոր մեծ քաղաքներում. ես ձեզ կասեմ, որ մեր քրիստոնեայ երկիրների բոլոր մեծ քաղաքներում կան վանդակներով և կողպէքներով պաշտպանված ամրոցներ, ուր բազմաթիւ գերուհիներ զոհ են բերվում անառակութեան ամենատոր ախորժակներին։ Այս բոլորիս, երբ գրում եմ, մեր կառավարութիւններից վկայագրված տներ գնում են ջահել աղջիկներ և վաճառում մէկ մէկի՝ որին 500, որին 800, որին 1000 ֆրանկով, անհետացնում են նրանց հէնց որ որսը սպառնում է դուրս պրծնել իրանց ձեռքից և ի զգուշութիւն պահում են նրանց բանտարկվածների նման՝ ամուր փակված դռների յետև, որոնց վրա պէտք է գրված լինէին հրեղէն տառերով Դանտէի Դըժոխքի խօսքերը,—«Հրաժարվեցէք ամեն յոյսից դուք, որ մտնում էք այստեղ»։

Այսպէս էր գրում տիկին դը Գասպարէն 1877 թ-ին, հետևելով անգլիուհի Զօզէֆին Բեատլէրի օրինակին, որ պէտք է հաստատվի նոր աբոլիցիոնիզմի առաքեալը։

«Բարքերի ոստիկանութեան» սիստէմը՝ իր անառակութեան տներով, անբարոյական կանանց ցուցակագրութեամբ և պաշտօնական բժշկական քննութեամբ, ընդունվեց Անգլիայում 1864 թ-ին, բայց հինգ տարի անցած այդ սիստեմի դէմ այնտեղ սկսվեց մի զօրեղ շարժում,—հիմնվեց պրօպագանդայի մի թերթ, The Schield (Վահան) անունով, 600,000 ստորագրութեամբ մի խնդրագիր ժատուցվեց հասարակաց ժողովին (1870 թ-ին) և կազմվեց մի ընկերութիւն (1875 թ.), որ այժմ կոչվում է «Աբոլիցիոնիստների Միջազգային Դաշնակցութիւն կանոնադրված անառակութեան դէմ»։

Այդ շարժման պարագլուխ հանդիսացաւ մի անվեհեր, եռանդուն և տաղանդաւոր կին, վերոյիշեալ Զօզէֆին Բեատլէրը, որի «Մի ձայն անապատում» գրքոյկը ներշնչված է մարգարէական ոգով։

«Մի ձայն անապատում, կարդում ենք այդ գրքոյկի մէջ։ Մի կնոջ ձայն է այդ ձայնը, և անապատը բազմութիւնն է, ամբոխը, մարդկանց այդ լայնատարած անապատը... Անառակութեան հարցը այս նոր (ոչ զուտ առողջապահական, այլ գլխաւորապէս բարոյա-

տելիգենտ հասարակութիւնը», ինչպէս հարկադրել նրան որ գործէ, աշխատէ: Ահա այս բանը չէ ասում Թղթակիցը: Իսկ ամենագլխաւորը դա է:

*

Հիմա որ Տիգրան Նազարեանը կատարելապէս խեղճ է և, իբրև ամեն մի խեղճ, արժանի է կարեկցութեան: Հաւաքելով դէսից դէնից հին կլիշէներ, նա չէ էլ կարողանում իմանալ թէ դրանք ինչ են ներկայացնում. նա յոյս ունի իր ընթերցողների միամտութեան վրա, գիտէ որ «արտասահմանի բոլոր ամենանշանաւոր ֆիրմաների հետ կապած պայմանները» մէկին, երկուսին կարող են եթէ ոչ հաւատացնել, գոնէ մոլորեցնել: Այդպիսի մի կլիշէի տակ Տիգրան Նազարեանը գրել էր. «Հրեշտակները երգում են «Էջմիածինն ի Հօրէ»: Եւ երբ մենք մեր հիացմունքը յայտնեցինք նրա այդ «գրական գործունէութեան» վրա, խեղճը տագնապահար վեր թռաւ և իր «Ծարազի» մէջ ասաց, որ մենք անարդում ենք «սուրբ Երուսաղէմը»: Էջմիածինն ուր, Երուսաղէմն ուր: Աշխարհագրական այդքան հարուստ տեղեկութիւններով բեռնաւորված խմբագիրը ինչին կարող է արժանանալ, եթէ ոչ բարձրաձայն ծիծաղի: Բայց մանաւանդ անմանն է Տիգրան Նազարեանի երեխայութիւնը: Մենք նրա երևելի պատկերում երևացողը անուանել էինք արաբական քաղաք կամ քարվանսարայ: Եւ դա, Տիգրան Նազարեանցի լոգիկայով, անարդանք է Երուսաղէմի համար, որ ունի «սուրբ» մակդիրը: Գուցէ Տիգրան Նազարեան չը գիտէ, որ Երուսաղէմը երկար ժամանակ արաբական քաղաք էր, գուցէ չը գիտէ, որ նա այժմ արաբականից էլ վատ անուն ունի—թիւրքական քաղաք: Գուցէ չը գիտէ, որ Երուսաղէմում քարվանսարաներ եղել են շատ հնուց և կան այժմ. գուցէ, գուցէ... Անմանն խմբագիրը այժմ միայն ուղղում է իր հին կլիշէի անունը. սուտ էր թէ հրեշտակները «Էջմիածին» էին երգում, այժմ պէտք է իմանալ, որ պատկերը Երուսաղէմն էր ներկայացնում, իսկ հրեշտակները երգում են «Փառք ի բարձունս»: Բայց դա էլ սուտ է. թող Տիգրան Նազարեանը եկեղեցի գնացած ժամանակ հարցնէ մոմ ծախող լուսարարին և կիմանայ, որ «Փառք ի բարձունս» երգում էին հրեշտակները ոչ թէ Երուսաղէմում, այլ Բեթղեհեմում...

Այսքանից աւել խօսել Տիգրան Նազարեանցի հետ—մեղք է: Ասած է, որ յանդգնութիւնը քաղաքներ է վերցնում, բայց երեխաների յանդգնութիւնը միայն ծիծաղի է արժանանում...

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երէկ, ամսիս 19-ին, երեքշաբթի, ինչպէս հաղորդել էինք, Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական բաժնում քննվեց Շուշու հայոց կոնսիստորիայի յարուցած դիֆֆամացիայի դատը «Մշակի» խմբագիր Ա. Քալանթարի և աշխատակից Հ. Առաքելեանի դէմ:

Նախագահում էր անդամ Սորուվէ. մեղադրում էր պրոկուրորի օգնական Ադիգեզալով: Մեղադրվողները իրանք էին իրանց պաշտպանում: Զեկուցանող անդամ Օպտեվցեվի զեկուցումից յայտնվեց, որ Շուշու հայոց կոնսիստորիան—ի դէմս Գարեգին վարդապետ Սաթունեանցի և Կարապետ, Գարեգին, Այէքսանդր քահանաների—պալատի պրոկուրորին 1896 թւի հոկտեմբերի 26-ին ուղարկած մի բողոքագրով խնդրում է դատ բանալ «Մշակ» լրագրի խմբագիր—Ա. Քալանթարի և մշտական աշխատակից Հ. Առաքելեանի դէմ և պատժել նրանց պատժական օրէնսգրքի 1039 յօդուածով, դիֆֆամացիայի համար, որովհետև Հ. Առաքելեան գրել և Ա. Քալանթար տպել է «Մշակի» 1896 թւի № 87-ում մի թղթակցութիւն Գանձասարի վանքից, որ միանդամայն արատաւորում է յիշեալ վարդապետի և քահանաների բարի անունը և պատիւը: Այդ բողոքագրի հիման վրա, դատաստանական պալատը ենթարկել է Քալանթարին և Առաքելեանին մեղադրութեան՝ օրէնքի 1039 յօդուածով:

Ստանալով մեղադրական ակտը, Հ. Առաքելեան 1897 թւի ապրիլի 30-ին դիմեց պալատին, խնդրելով տալ իրան վկայական, որպէս զի կարողանայ ստանալ Էջմիածնի սինօդից մի քանի կարևոր դոկումէնտների վաւերացրած պատճէնները: Այդ դոկումէնտները կարող են հաստատել, որ «Մշակի» № 87-ի մէջ տպած թղթակցութիւնը ճիշդ է և, բացի դրանից, ցոյց կը տան, որ Գարեգին վարդապետ Սաթունեանց մեղադրվում է բազմաթիւ զեղծումների և կաշառակերութիւնների մէջ: Իր այդ խնդիրքը Հ. Առաքելեան կրկնեց 1897 թւի սեպտեմբերի 15-ին, որին միացաւ և Ա. Քալանթար: Դատաստանական պալատը, յարգելով այդ խնդիրքները, տուեց երկու վկայական՝ սինօդին ներկայացնելու և յիշված դոկումէնտները ստանալու համար:

Գործի զեկուցումից յետոյ, նախագահի հարցին պատասխանելով, Քալանթար և Առաքելեան ասեցին, որ իրանց մեղաւոր չեն համարում: Հ. Առաքելեան յայտնեց, որ սինօդը տուել է իրան Գանձասարի վանահայր Անտոն վարդապետ Վարդազարեանցի երկու պաշտօնական յայտարարութիւնների պատճէնները, որ և ներկայացնում է ռուսերէնի թարգմանութեան հետ միասին. այդ պատճէնները միանդամայն ապացուցանում են, որ յօդուածի մէջ գրվածը ճիշդ է: Ապա Քալանթար և Առաքելեան յայտնեցին, որ սինօդը մերժել է տալ այն օրագրի պատճէնը, որով Սաթունեան վարդապետը մեղադրվում է կաշառակերութեան, կեղծիքների և զեղծումների մէջ: Առաքելեան դիմել է Էջմիածնի սինօդի պրոկուրորին, խնդրելով վկայել պալատի առաջ, որ, արդարև, Սաթունեան վարդապետը մեղադրվում է զանազան յանցանքների մէջ, քանի որ սինօդը մերժում է տալ պահանջած պատճէնները: Նախագահը յայտնեց, որ ստացված է պրոկուրոր Կանչէլիից մի հեռագիր, որի մէջ ասում է, թէ արդարև, Սաթունեան վարդապետը մեղադրվում է զանազան զեղծումների և կեղծիքների մէջ և այդ մասին գործ կայ սինօդում ու Կովկասի կառավարչապետի դիւանատանը:

Պրոկուրորը յայտնեց, որ անհրաժեշտ է յետաձգել նիստը ու օրինական եղանակով ստիպել սինօդին տալ պահանջած տեղեկութիւնները կամ ստանալ այդ տեղեկութիւնները կառավարչապետի դիւանատնից: Սակայն պալատը չը համաձայնվեց յետաձգել նիստը:

Ապա քարտուղարը կարդաց մեղադրական ակտը:

Նախագահը հարցրեց մեղադրվողներին՝ կամենում են լրացնել իրանց ցուցմունքները: Հ. Առաքելեան խնդրեց կարդալ Վարդազարեան վարդապետի պաշտօնական յայտարարութիւնները: Նախագահը կարդաց այդ յայտարարութիւնները, որոնք գրված են սինօդին 1895 թ. հոկտեմբերի 23-ին: Այդ ընթերցումը տևեց կէս ժամ:

(Կը շարունակվի)

—

Դատաստանական պալատը, 10 րօպէ խորհրդակցելուց յետոյ, արձակեց իր վճիռը, որով արդարացրեց Ա. Քալանթարին և Հ. Առաքելեանին:

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Հոկտեմբերի 6-ին

Խմբապետ Ճզմաճեան, վերջացնելով իր պարապմունքը՝ հեռացաւ Սղնախից, որի պատճառով Նորակազմ եկեղեցական քառաձայն խումբը առժամանակ ընդհատեց իր գործունէութիւնը: Այս հարցի առիթով, երէցփոխ բժիշկ Մովսիսեանի նախաձեռնութեամբ, կայացաւ ծխականների ժողով: Ժողովը յանձնարարեց մոմավաճառանոցի յանձնաժողովին՝ հրաւիրել խմբապետ մի տարով, որպէս զի այդ ժամանակամիջոցի ընթացքում շարունակէ պարապմունքները խմբի հետ և պատրաստէ տեղացիներից մէկին՝ մշտական խմբապետի պաշտօնը վարելու համար, թողնելով խմբապետի վարձատրութեան գումարի քանակութիւնը յանձնաժողովի հայեցողութեան: Ժողովը նոյնպէս վճռեց՝ դիմել հայ հասարակութեան կողմից ժողովրդական դպրոցների դիրեկտորին խնդրագրով, որպէս զի թոյլատրվի տեղական ուսումնարանների աշակերտներին և աշակերտուհիներին՝ մասնակցութիւն ունենալ խմբում: Յանձնաժողովը յատկացրեց խմբապետին ռոճիկ 480 րուբլի տարեկան, բնակարան, ծառայ և վառելափայտ այն պայմանով, որ ապագայ խմբապետը պատրաստէ մշտական խմբապետ, իսկ խմբի հետ շարունակէ պարապմունքներ, սովորեցնելով նոյնպէս 12 հոգուն նոտաներ:

Նախկին հայոց ուսումնարանի տեղը բացված Լիանոզեան տարրական ուսումնարանն այս տարի ընդարձակեց իր ծաւալը: Դպրոցում աւելանալով երկրորդ բաժանմունքը, նշանակված են նոր հայ վարժուհի և ռուս կրօնուսոյց: Երկու սեռի սաների թիւը հասնում է 90-ի, որոնցից 80 հայ են, իսկ 10 վրացի: Վրացիներին վրաց լեզուն աւանդում է վրաց կրօնուսոյցը:

Վէլիսցիխէ գիւղում, ինչպէս հաղորդեցինք ժամանակին, անցեալ տարի բացվեց տարրական դպրոց, հայոց դպրոցի տեղ, որտեղ սովորում էին բոլոր ազգութիւնների մանուկները: Այդ դպրոցը այս տարվանից փակվեց՝ միջոցներ չունենալու պատճառով: Տեղական բնակիչ Օհանեան մեռնելով՝ թողել էր կտակ, որպէս զի իր ժառանգները մշտական տան հայոց դպրոցի պահպանութեան համար տարեկան 100 բուբլի: Օհանեանի ժառանգները դաղարեցրին դպրոցին որոշված նպաստը տալ, առարկելով, որ կտակով որոշված է նպաստել հայոց եկեղեցական-ծխական դպրոցին, մինչդեռ այժմեանը մինիստրական դպրոց է: Այդ մասին ուսումնարանական իշխանութիւնը դատ է սկսել Օհանեանի ժառանգների դէմ:

Մեր սանիտարական հոգաբարձուները մեռելութեան դատապարտեցին իրանց: Ի՞նչ արեցին հոգաբարձուները: Մի քանի անդամ մանդալով՝ վերջացած համարեցին իրանց պարտաւորութիւնը և ձեռքերը ծալած՝ անձնատուր եղան իրանց առօրեայ հոգսերին: Ոչինչ չը փոխվեց. քաղաքը նոյնն է, ինչպէս առաջ: Սակայն փորձը հաստատեց, որ միայն հոգաբարձուները մեղաւոր չեն. մշակված սանիտարական կանոններն անհամապատասխան էին տեղական պայմաններին: Այսպէս, օրինակ, պահանջվում էր, որ ամեն տուն ունենայ լուացքի ջուր ածելու համար հոր և տանտէրերը իրանք մաքրեն բագերն ու փողոցները ու աղբը իրանք դուրս տանեն: Այդ չիրագործվեց: Բագերը ու փողոցները մաքուր պահելու համար անհրաժեշտ էր կազմակերպել քաղաքային սայլեր՝ աղբը դուրս տանելու համար որոշ վճարով, որովհետև ամեն ընտանիք հնարաւորութիւն չունի անձամբ աղբը դուրս տանել: Այսպէս էլ վճռեց մեր դուման փետրվար ամսին կայացած նիստում, բայց նրա վճիռը մնաց անկատար: Ի դէպ. զարմանալի և ծիծաղելի կարգեր են թագաւորում մեր քաղաքային ինքնավարութեան մէջ. խօսում են, վիճում, վճիռներ են արձակում, բայց վճռածը չեն իրագործում: Այսպիսի բազմաթիւ օրինակներ կան: Այսպէս է յաւերժացնում մեր դուման իր բեղմնաւոր գործունէութիւնը...

Գ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Հոկտեմբերի 14-ին

Կիրակի, հոկտեմբերի 10-ին, հասարակական գրադարան-ընթերցարանի դահլիճում կայացաւ

կան) տեսակէտից դնելու համար բաւական է երկու խօսք,—երկու խօսք՝ դուրս եկած մի կընոջ բերնից, որ խօսում է յանուն բոլոր կանանց,—«մենք ապստամբում ենք»: Ճիշդ է, այդ գիտութեան լեզու չէ, ոչ էլ մի բանաձև վիճակագրական կամ առողջապահական եզրակացութեան... այդ միմիայն կնոջ բողոք է, մի ճիչ սարսափի, կոչ դէպի արդարութիւն... Այդ ձևով արտայայտված բողոքը հեռու է ի հարկէ կատարեալ լինելուց, բայց նա բաւական է մեր նպատակի համար: Կռւի հրաւիրող փողի ձայնն էլ անկատար բան է, բայց նրանից կատարելութիւն չէ պահանջվում, այլ այն միայն, որ այնքան ազդու լինի, որ կարողանայ ժողովել զինուորներին կռւի դաշտը... Այս մի քանի խօսքը, կրկնում ենք, ոչ այլ ինչ են, եթէ ոչ լոկ կոչ, բայց երբ ստրուկը կորցնում է համբերութիւնը և աշխատում է փշրել շղթաները, մոտ է ազատութեան ժամը: Մինչև այժմ պակասում էր մի ձայն, որ տար ազդարար նշանը: Այդ ձայնն է, որ այժմ գալիս է յայտարարելու կռւի կանանց ազատութեան և բարձրացման համար»:

Ուղղելով խօսքը ամենից առաջ կանանց, իր «ընդհանուր ստորացման քոյրերին և ընկերուհիներին», տիկին Բեսոլէր ենթարկում է կանոգրված անառակութեան սիստէմը անխնայ քննադատութեան, որի մէջ պարունակված են աբոլիցիոնիստների դրեթէ բոլոր պատճառաբանութիւնները, լրիւ կամ սաղմային դրութեամբ:

Մռայլ գոյներով նկարագրելով ընկած կանանց դրութիւնը անառակութեան տներում, տիկին Բեսոլէր քննում է ամենագլխաւոր, դրեթէ միակ հիմքը, որ բերում են աբոլիցիոնիստների հակառակորդները այդ տների գոյութեան անհրաժեշտութիւնը պաշտպանելու համար,—առողջապահական հիմքը: Որպէս զի ամբողջ հասարակութիւնը չը վարակվի վէնէրականախտերով, ասում են բարքերի ոստիկանութեան սիստէմի պաշտպանները, պէտք է տէրութիւնը հսկի անառակութեան վրա, բժշկական քննութեան ենթարկելով անառակ կանանց, իսկ որպէս զի այդ հսկողութիւնը հնարաւոր լինի, պէտք է կենտրոնացնել անառակութիւնը որոշ կէտերում, որոշ տներում, պէտք է ցուցակագրել բոլոր անառակութեամբ պարապող կանանց: «Սակայն վերջին տարիների վիճակագրական տեղեկութիւնները, առարկում է տիկին Բեսոլէր, ցոյց են տալիս, որ անառակութեան պաշտօնական բոյները աւելի շատ են տարածում վարակիչ ախտեր, քան գաղտնի անառակութիւնը: Վերջապէս ենթադրենք թէ այդ ճիշդ չէ, այլ ընդհակառակը գաղտնի անառակութիւնն է աւելի վտանգաւորը, բայց ինչ օգուտ դրանից, երբ յայտնի է, որ «բարքերի ոստիկանութիւնը» կարողանում է հսկել անառակ կանանց միայն ամենաչնչին փոքրամասնութեան վրա. Պարիզում, օրինակ, այժմ (եօթանասուն թւականների սկզբին) երեսունից մինչև քառասուն հազար կին կայ, որոնք ակնյայտնի պարապում են անառակութեամբ, մինչդեռ նրանցից միայն հազար հինգ հարիւրն են փակված հաժբերատարութեան տներում, և մի երեք հազար հոգի էլ ունեն ոստիկանութեան տոմսակ, այնպէս որ բժշկական քննութեան են ենթարկվում միայն չորսից մինչև հինգ հազար անառակ կանայք, իսկ մնացած երեսուն հազարը չեն ենթարկվում ոչ մի հսկողութեան»:

«Բայց ամենից առաջ, ասում է հեղինակը, մեր դրած հարցը բարոյական հարց է, արդարութեան հարց է: Բարքերի ոստիկանութեան նախազգուշական և պատժական միջոցները ուղղված են բացառապէս թոյլ սեռի դէմ: Կինը ենթարկվում է բժշկական քննութեան, իսկ տղամարդը չէ: Երևան է գալիս վարակիչ հիւանդութեան մի դէպք. զբաղվում են միայն վարակված կնոջով, առանց բարձրանալու մինչև վարակման աղբիւրը. խեղճ մեղանչող կինը բանտարկվում է, իսկ նրա մեղսակիցը, իսկական յանցաւորը ապատ ման է գալիս իր հաճոյքով: Հապա որտեղ է մարդու և կնոջ հաւասարութիւնը Աստծու առաջ, բարոյական օրէնքի առաջ, մարդկային արդարադատութեան առաջ... Վերջապէս ինչ օգուտ այդ միակողմանի հսկողութիւնից... Ո՞վ է մտցնում ընտանիքները այդ սարսափելի հիւանդութիւնները: Ո՞վ է տեսել, որ անառակ կանայք լցվեն մասնաւոր տները: Մի՞թէ այդ կանայք են անձամբ վարակում ընտանիքների մայրերին և նրանց միջոցով զաւակներին: Ոչ, տղամարդիկ, ամուսինները, հայրերն են փոխադրում իրանց տները այդ ախտերը... Բայց ոստիկանութիւնը երկու հաւասարապէս վտանգաւոր, վարակված անձնաւորութիւններից առանձնացնում, կղզիացնում է միայն անառակ կնոջը, որ իր արհեստի չնորհիւ արդէն արտաքսված է ընտանիքից և հասարակութիւնից, և ազատ է թողնում տղամարդկանց, որոնք ապրում են ընտանիքի մէջ և ընտանեկան շրջաններում... Այդ է «արական բռնապետութեան» տրամաբանութիւնը... Բժիշկները չեն հսկում տղամարդկանց վրա, որովհետև նրանք իրաւամբ բռնութիւն, անպատուութիւն, խայտառակութիւն կը համարեն, եթէ ստիպված լինեն քննութեան ենթարկվել ոստիկանութեան հրաւիրած բժշկի կողմից, բայց կանանց ստիպում են բանտարգելութեան սպառնալիքի տակ, ենթարկվել այդպիսի քննութեան, որովհետև կանայք անպաշտպան են, թէև այդ քննութիւնը աւելի ևս ստորացուցիչ է կնոջ համար, քան տղամարդու համար: Գառան Դիւշատէլ պնդում է, թէ կանայք ընդունում են իրանց ցուցակագրութիւնը ոստիկանութեան կողմից, իբրև «կնիք իրանց անկման»:

«Այդ թշուառ կանանց անկումը, բացականչում է տիկին Բեսոլէր, չը պէտք է հաժարվի ստորացում միայն նրանց համար, այլ և վիրաւորանք հասցրած բոլոր պարկեշտ կանանց պատիւն, ամօթ բոլոր կանանց համար, աշխարհիս բոլոր երկիրներում... Ամեն տեղ, ուր կանանց ստրկութիւնը արմատ է գցում, բոլորովին ընկնում է մեր սեռի պատիւը... Բաւական է որքան անտարբեր դիտեցինք այդ թշուառ կանանց տանջանքները, օգնութեան հասնենք նրանց: Ինչպէս որ մենք կարող էինք լինել այն, ինչ-որ նրանք են, նրանք էլ, միւս կողմից, կարող են դառնալ մի օր այն, ինչ-որ մենք ենք: Նրանց համար անհնար չէ բարոյական վերականգնումը: Այդ է ցոյց տալիս իմ երկարատև փորձը, որ ինձ քաջալերում է առաջարկել ձեզ մասնակցել խաչակրաց արշաւանքին կանանց ստրկութիւնը վերացնելու համար... Զը կայ երկու տեսակ բարոյական օրէնք, մէկը զօրեղ սեռի համար, միւսը թոյլ սեռի համար: Կայ միայն մի բարոյական օրէնք ամենքի համար... Ցիշեցէք Քրիստոսի վերաբերումը դէպի մեղանչող կինը, դուք, բոլորդ, որ ձեզ քրիստոնեայ էք անուանում և քարկոծում էք վատ բարքի կանանց, մինչդեռ ամենամեծ յարգանքներ էք մատուցանում նրանց մեղսակից այր մարդկանց...»

(Կը շարունակվի)

Կովկասի հայոց Բարեգործական ընկերության տեղական ճիւղի արտակարգ ընդհանուր ժողովը։ Պարապման առարկաներն էին. Թիֆլիսի խորհրդից ստացած № 300 գրութիւնը, և 2) ընկերության 8 գործադիր անդամների տուած բողոքը այս տարվայ յուլիսի 16-ին և 18-ին կայացած ընդհանուր ժողովների ապօրէն լինելու մասին։ Ներկայ էին ժողովին հավիւ 19 հոգի, թէև սրանով երկրորդ անգամն էր, որ ժողովի էին հրաւիրում անդամներին։

Նախագահը բանալով ժողովը ցերեկվայ ժամը 11-ին, կարդաց խորհրդի այն պաշտօնական գրութիւնը, որով յայտնվում է ճիւղերի անջատումը, կառավարչական նոր կարգադրության համաձայն։ Ժողովի ցանկութեամբ նախագահը կարդաց նոր կանոնագիրը։ Ժողովը, ծանօթանալով այդ նոր կանոնադրության հետ, համարեա միաձայն որոշեց շարունակել իր գործունէութիւնը և անյապաղ նոր կանոնադրութիւնը ներկայացնել ուր հարկն է հաստատության համար։ Աւելորդ համարելով դրա համար առանձին ժամանաժողով ընտրել, ժողովը պարտաւորեցրեց ներկայ վարչության՝ նոյն կանոնադրութիւնը անփոփոխ ներկայացնել կառավարության ի հաստատութիւն Ախալցխայի անունով։

Երկրորդ հարցը, այն է՝ 8 գործադիր անդամների տուած բողոքը յուլիսի 16-ին և 18-ին կայացած ժողովի դէմ, առիթ տուեց երկար և տաք վիճաբանութիւնների, որոնք տեսում են մինչև այսօր ևս։ Ինչպէս յայտնի է, յուլիսի 16-ին և 18-ին կայացած ժողովներում որոշվեց ընկերությանս կենտրոնից յետ ստացած 2154 ր. յատուկ գումարը յատկացնել Երուսաղէմի հայ որբանոցին, իսկ գրադարանի գրքերը և կայքը ծախել ժողովրդին ու չինությունը ընծայել քաղաքիս Վարդանանց եկեղեցուն։ (Տես «Մշակ» № 132 և 135)։ Մի քանի պարոններ բողոքում են նոյն ժողովների դէմ ասելով՝ թէ ապօրինի է արձակվել վճիռը, համաձայն կանոնադրության § 50-ի, որով պահանջվում է ընկերության անդամների ²/₃ մասի ներկայությունը ժողովում։ Վիճաբանությունը շատ աղմկալի էր, բայց որովհետև բողոքող կողմը բազմաթիւ էր, ուստի առաջարկեցին քուէարկել այն հարցը՝ արդեօք ապօրինի են, թէ կանոնաւոր նախընթաց ժողովները։ Թէև պահպանող կողմը յայտնեց, որ իրաւունք չը կայ կանոնաւոր ժողովը ապօրէն համարել և արդէն երեք ամիս անցած եղելությունը քուէարկել, բայց և այնպէս նախագահը, հակառակ կանոնադրության, քուէարկեց և ձայների բազմությամբ յուլիսի 16-ին և 18-ին կայացած ժողովները համարվեցին ապօրինի, և որոշվեց նոր ժողով կազմել նոյն հարցերի մասին։

Միւս օրը, հոկտեմբերի 11-ին, նոյն տեղում, երեկոյեան ժամը 6-ին կայացաւ երկրորդ ընդհանուր ժողով, ներկայությամբ 22 անդամներով։ Պէտք էր. 1) խորհրդից յետ ստացած 2154 ռուբլու մասին տնօրէնութիւն անել և 2) որոշումն կայացնել գրադարանի մասին։ Այս հարցերը, ինչպէս յայտնի է, վճռված էին յուլիսի 16-ին և 18-ին կայացած ժողովներում։ Նախքան հարցերի որոշելը, նախագահը կարդաց վարչության մի գրութիւնը, որով յայտնվում էր, որ երէկվայ ժողովում կայացած վճիռը ապօրինի է, որովհետև աչքի առաջ է ունեցել կանոնադրության § 50, փոխանակ տեղական ժողովների 16-րդը։ Ուստի վարչությունը պահանջում էր յուլիսի 16-ին և 18-ին կայացած ժողովների հարցերը ոչ թէ բոլորն էլ ապօրինի համարել, այլ այն հարցերը, որոնք միայն 2—3 ձայն չեն ստացել, այլ ձայների առաւելությամբ են որոշվել։ Արձանագրությունից երևաց, որ այն ժողովներում ապօրինի են միայն ճիւղի յատուկ գումար 2154 ռուբլու և գրադարանի գրքերի մասին արած որոշումները, որոնք վճռվել են ձայների բազմությամբ, իսկ գրադարանի չինությունը Վարդանանց եկեղեցուն նուիրելը օրինաւոր է, որովհետև միաձայն է որոշվել։ Կրկին լսվեցին ժողովում անբաւականություններ և սկսվեց վիճաբանություն։ Մանրամասնությունները աւելորդ համարելով այստեղ յիշել, կասենք, որ այդ հարցը կրկին քուէարկվեց և երեք ձայնի առաւելությամբ վճռվեց անկանոն ճանաչել յիշեալ ժողովի վճիռները։ Ապա վիճաբանություն սկսվեց կենտրոնից յետ ստացած 2154 ռուբլին տնօրինելու մասին։ Այդ փողը գործադրելու համար եղան տասն առաջարկություններ, որոնք և գաղտնի քուէարկության ենթարկվեցին։ Քուէարկությունից երևաց, որ ոչ մի առաջարկություն օրինաւոր թիւ քուէ չը ստացաւ։ Ուստի կրկին անգամ քուէարկվեց, բայց էլի ոչ մէկը չանցաւ. ժամանակն էլ ուշ լինելով, ժողովի ցանկությամբ, նախագահը փակեց ժողովը, շարունակությունը վաղվան թողնելով։

Ժողովի շարունակությունը տեղի ունեցաւ յաջորդ օրը, հոկտեմբերի 12-ին, երեկոյեան ժամը 6-ին, 23 անդամների մասնակցությամբ, մի և նոյն հարցերը որոշելու համար։ Յատուկ գումար 2154 ռուբլու մասին սկսվեց կրկին քուէարկությունը շարունակվել։ Այս անգամ առաջարկություններ եղան միայն 7 հատ, որոնք գաղտնի քուէարկվելով ոչ մէկը կանոնաւոր թիւ չը ստացաւ, որովհետև ներկայ ժողովի անդամները երկու մասի բաժանվելով, աշխատում էին հակառակորդների առաջարկությունները սևացնել։ Կրկին անգամ քուէարկություն եղաւ. այս անգամ ևս, ինչպէս նախընթացները, անցաւ ապարդիւն. որոշվեց երրորդ անգամ քուէարկել. սա էլ ապարդիւն անցաւ, ոչ մի հարց օրինական թիւով ձայն չը ստացաւ։ Ուստի ժողովի անդամները ձանձրանալով և արդէն ժամը 10-ից անց լինելով, որոշվեց ժողովը փակել, միւս օրվայ թողնելով։ Այդ մասին կը գրեմ յետոյ։

Անդամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք յայտնել էինք, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերության մէջ կազմված է մի յատուկ յանձնաժողով, որ մշակում է Անդրկովկասի վիճակագրական նկարագրության ծրագիրը։ Մեզ հաղորդում են, որ յանձնաժողովը վերջացնում է իր պարապմունքները և շուտով կը ներկայացնի իր զեկուցագիրը։ Յանձնաժողովը մշակել է երկու տեսակ ծրագիր, մէկը երկրի հիմնական պայմանների ուսումնասիրության համար, միւսը ընթացիկ երևոյթների ուսումնասիրության համար։ Հիմնական պայմանների ուսումնասիրությունը պահանջում է մեծ ծախք, որից և կախված է նրա իրագործումը։ Ընթացիկ վիճակագրությունը իր կողմից պահանջում է աշակցություն բազմաթիւ թղթակիցների կողմից, որոնք սակայն սակաւաթիւ են մեր երկրում։

—

Երէկ երեկոյեան Ախալքալաքից ստացանք հետևեալ հեռագիրը. «Գիշերը այրվեցին մի շարք խանութներ։ Վնասները ահագին են»։

—

Մեզ հաղորդում են, որ իշխան Թուսիեվի յայտնի գործի դատավճիռը բեկված է կառավարչական սենատի կողմից և առաջարկված է Թիֆլիսի դատաստանական պալատին վերաքննել գործը դատաւորների նոր կազմությամբ։

—

Երկուշաբթի օր, հոկտեմբերի 18-ին, Թիֆլիսում այրվեց Մարկինի տունը, որ գտնվում է Միխայլովսկայա և Կիրօչնայա փողոցների անկիւնում, Մադէրի հիւրանոցի դէմ։ Հրդեհն սկսվեց հացագործ Ախմախչեանցի փուռից։ Տունը ապահովագրված է 20 հազար ռուբլով։

—

Յայտնի ինժենէր Լինդլէյ այժմ Թիֆլիսումն է գտնվում և այս օրերս մտադրություն ունի գնալ Բագու։ Բագուում մի քանի ժամանակ մնալուց յետոյ նա կը վերադառնայ Թիֆլիս, որտեղ քաղաքի հրաւէրով կը մասնակցի ձայնաւորներից կազմված այն յանձնաժողովի խորհրդակցություններին, որի նպատակն է լայնացնել քաղաքային ջրանցքը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում մի քանի տիկինների նախաձեռնությամբ մի նոր ընկերություն է հիմնվում, որի նպատակն է միջոցներ ձեռք առնել բանող դասակարգին պատկանող մարդկանց կոպիտ վարմունքի դէմ իրանց կանանց և երեխաների հետ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. Ամսիս 13-ից սկսվեց Բագուում հայկական ներկայացումների սեզոնը Վասիլիեվ-Վեատսկու ցիրկ-թատրոնում, որովհետև Թաղիեվի թատրոնը հազիւ թէ նոյեմբերի վերջին պատրաստ լինի։ Ներկայացրին «Թագի համար» պիէսը։ Թողնելով բովանդակությունը՝ դերակատարների համար կարող ենք ասել, որ բոլորն էլ անցեալ տարվայ դերասաններ ու դերասանուհիներն էին։ Այդ պիէսի մէջ նոր հրաւիրված դերասանուհիներից ոչ մէկը դեր չունէր։ Առաջին անգամ բեմ դուրս կը գայ տ. Մայսուրեանց շաբաթ օր։ Խաղը, պէտք է ասած, կենդանի անցաւ։ Տ. Սիրանոյշ, պ.պ. Աբէլեան ու Վրոյր հիանալի էին իրանց դերերում, մանաւանդ վերջին գործողության մէջ տ. Սիրանոյշ ու պ. Աբէլեանը սքանչելի էին։ Վատ չէր պ. Աղայեանը եպիսկոպոս-թագաւորի դերում, բայց նրա հասակն ու ձայնը բաւականին խանգարում էին խաղն աւելի կենդանի դուրս բերելու։ Տ. Մելիքեանը իր դերում չէր, նա ուզում էր լաւ թագուհի լինել, բայց այդ նրան չէր աջողվում. երևում էր, որ դերը նրա ոյժից վեր էր»։

—

ԲԱԼԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Ահա մի ամսից աւել է, որ երկաթուղու գնացքները ամեն օր հազարաւոր գիւղացիներ են բերում Բալախանի. դրանք ներկայ տարվայ անբերրիությունից վնասված տեղերից են գալիս գործ որոնելու։ Ցեղ հասնելուն պէս այդ խեղճերը ընկնում են զանազան հարստահարիչ կապալառուների ձեռքը։ Բալախանիում համարեա թէ բոլոր գործերը գտնվում են կապալառուների ձեռքում. դրանց ամեն օր կարելի է տեսնել կայարանում, ուր նրանք վարձում են նոր եկած գիւղացիներին օրական 50—60 կոպէկով և խոստանում են գիւղացիներին շուտ փող տալ, որ ուղարկեն իրանց աղքատ ընտանիքը կերակրելու համար։ Գիւղացիները ուրախ ուրախ հետևում են կապալառուներին այս կամ այն հանքերում տաժանելի աշխատանք կատարելու համար. բայց շաբաթներ և ամիսներ սպասում են և չեն կարողանում փող ստանալ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագրի խօսքով, հայանների ժողովում, դեռ նստաշրջանը փակվելուց առաջ, հարց կը յարուցվի այն կոչի մասին, որ ակնյայտ կերպով տարածվում է այժմ Դուբլինի փողոցներում։ Այդ կոչի մէջ, որի վերնագիրն է «Անգլիական զօրքի մէջ մտնելը դաւաճանություն է Իրլանդիայի վերաբերմամբ», ասված է, ի միջի այլոց հետևեալը. «Անգլիական ծառայության մէջ գտնվող և Հարաւային Աֆրիկա ուղարկվող իրլանդացիները ստիպված պէտք է լինեն կռուել իրլանդական նացիոնալիստների դէմ, որոնք բարձրացրին իրլանդական դրօշակը Տրանսվալում և կազմակերպեցին իրլանդական զօրաբաժին՝ բօէրների համար կռուելու Իրլանդիան ստրկացնողների դէմ։ Ցիշեցէք 1798 թիւը, յիշեցէք բացառական օրէնքները, յիշեցէք սովը։ 60 տարվայ ընթացքում մեր ազգաբնակությունը կիսով չափ պակասեց, որպէս անգլիական տիրապետության անմիջական հետևանք։ Բօէրները քաջաբար կռուում են այդ տիրապետության դէմ։ Եւ չի համաձակվի ոչ մէկ իրլանդացի ձեռք բարձրացնել նրանց դէմ կամ պատերազմել մեր ընդհանուր թշնամու—Անգլիայի համար... Մեր բոլոր քաղաքներում և գիւղերում շրջում են անգլիացիներ, որոնք համոզում են իրլանդական թեթևամիտ պատանիներին մտնել բրիտանական զօրքը։ Այդպիսի մարդիկ թշնամի են մեզ, և դրանց հասարակության մէջ երևալը ամօթ է ամեն մի օրինաւոր իրլանդացու համար։ Պէտք է հետևել նրանց իւրաքանչիւր քայլին և զգուշացնել այն պատանիներին, որոնց նրանք աշխատում են գցել իրանց թակարդի մէջ։»

—Արտասահմանեան բոլոր լրագիրները դժգոհություն են յայտնում այն բանի առիթով, որ պատերազմական բեմից տեղեկություններ ստացվում են միայն անգլիական աղբիւրներից և հետևաբար միակողմանի բնաւորություն են կրում։

—«Times» լրագիրը գրում է. «Բօէրների ցոյց տուած բարձր յատկությունները պէտք է աւելի ևս դրդեն մեզ խաղաղացնելու հարաւային Աֆրիկան, մի բան, որը, ի հարկէ, պատերազմի վերջնական նպատակն է կազմում։» Լրագիրը գովում է բօէրներին, որպէս զինուորներին, բայց ասում է, որ Անգլիայի շահերը պահանջում են միանդամից ընդ միշտ ջնջել աֆրիկանդէրների ազատ ազգի սուերը։ Այդ հայեացքների հետ համաձայնվում են և մի քանի լրագիրներ, որոնք ակնյայտնի կերպով խոստովանում են, որ Անգլիան ներկայ դէպքում աշխատում է, իր անձնական շահերի համար, իր տիրապետության ենթարկել մի փոքրիկ անկախ ժողովուրդ։

—Վիէննայից հեռագրում են «Новости» լրագրին հոկտեմբերի 13-ից (25-ից). «Երէկ, ըստ խոստացուած, արդարադատության մինիստրի գաղտնի շրջաբերականի առիթով երիտասարդ չէխերի պատգամաւորի արած հարցապնդումը կարդալու ժամանակ, տեղի ունեցաւ մի աղմկալի տեսարան։ Շրջաբերականով պահանջվում է չէխական դատարաններում մտցնել գերմանական լեզուն, իբրև պաշտօնական լեզու։ Երիտասարդ չէխերը սաստիկ աղմուկ բարձրացրին, հայհոյեցին և բռունցքներով յարձակվեցին մինիստրի վրա։ Նրանք աղաղակում էին. «Գնացէք Բերլին։ Դուք այնտեղ կը ստանաք պրուսական չքանչան»։ Մաստրալկա, Գօլանսկի, Բրէժար և Դօլէշալ երիտասարդ չէխերը վերջրին մինիստրի թղթերը և դօկումէնտները և այդ բոլորը շպրտեցին նրա երեսին։ Գերմանացիները նրան ցոյցեր արին։ Մինիստրը ստիպված եղաւ փախչել ձախակողմեան դռներով, որովհետև աջակողմեան դռների մօտ խմբվել էին երիտասարդ չէխերը։ Մինիստրին ուղեկցում էին, որպէս պահապաններ, գերմանացի պատգամաւորները»։

—Կ. Պոլսից գրում են «Polit. Corr.» լրագրին, որ հայոց պատրիարքարանում սկսված ճգնաժամը կը վերջանայ նրանով, որ Օրմանեան պատրիարքը կը մնայ իր պաշտօնում։ Պատրիարքը, որպէս թէ հաստատվեց, որ սուլթանի իրադէն, որի մէջ զիջողություններ կան հայերի պահանջների վերաբերմամբ, իսկապէս հաղորդված է մեծ վիզիրին, դաւանությունների մինիստրին, կրթական մինիստրին և Կ. Պոլսի քաղաքապետին։ Ուստի, և մանաւանդ այն պատճառով, որ սուլթանը յամառությամբ մերժում է ընդունել պատրիարքի հրաժարականը և մի և նոյն ժամանակ բոլոր մինիստրները, հայոց ազգային խորհուրդը (?) և հայ ժողովրդի զանազան նշանաւոր անդամները հաստատում են պատրիարքին մնալ իր տեղում, նա այլ ևս չէ կարող պնդել իր հրաժարականի վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

18 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վիրաւորված բօէրներին օգնություն հասցնող այստեղի հօլանդական մասնաժողովը կոչում արեց օգնության մասին, որովհետև բօէրները զգում են բժշկական օգնության, վիրաւորվածներին խնամելու և պատերազմի դաշտում ընկածների որբացած ընտանիքներին կերակրելու կարիք։

ԼՕՆԴՕՆ, հոկտեմբերի 18-ին։ «Բէյտէրի գործակալություն»։ «Times» լրագրին հեռագրում են հոկտեմբերի 16-ից, որ օդապարիկ իջեցրեց, որի շնորհիւ հնարաւոր եղաւ որոշել թշնամու դիրքը և նրա կատարած աշխատանքները։

«Times» լրագրին Կապշտադտից, հոկտեմբերի 17-ից, հեռագրում են, որ Լէդի-Սմիթից այստեղ ստացված տեղեկությունների համեմատ, այսօր բրիտանական առաջաւոր գնդերը ընդհարում ունեցան բօէրների հետ։ Ժուբէր կապ հաստատեց Օրանժեան հանրապետության զօրաբաժինների հետ։ Բօէրների ընդհանուր թիւը 16,000 է, եթէ ոչ աւելի. նրանք զետեղվեցին Լէդի-Սմիթից դէպի հիւսիս կիսաշրջանի ձևով, որի շառաւիղը հաւասարվում է 10 մղոնին։ Մէկ զօրաբաժին պատում է քաղաքը հարաւային ուղղությամբ, երևի Լէդի-Սմիթի և Կօլէնզօի միջև երկաթուղու գիծը կտրելու նպատակով։ Կրիւգէր, լուրերին նայելով, գտնվում է Գլէնկէում։

Նոյն լրագրին հոկտեմբերի 16-ից հեռագրում է Գլէնկէում։

Նոյն լրագրին հոկտեմբերի 16-ից հեռագրում են, որ Կիմբէրլէյում այսօրվանից շատ վատահրաժարություն է տիրում։ Բրիտանական հեռախուզող զօրաբաժինները առաջ են քաշված քաղաքից 7 մղոն հեռաւորության վրա։ Քաղաքում ուտեստի այնքան պաշար կայ, որ բաւական կը լինի ինն ամիս։ Հանքերում դեռ աշխատում են։ Նոյն լրագրի տեղեկությունների համեմատ, հրաման արձակվեց կազմակերպելու գվարդիայի հեծելազօրքից հաւաքական գունդ՝ Հարաւային Աֆրիկայի մէջ ծառայելու համար։

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Հոկտեմբերի 18-ին։ Անցեալ օր այստեղ եկած արտաքին գործերի մինիստրը այսօր կընդունվի Թագաւոր Կայսրի կողմից Վօլֆսգարտէնում։

ԼԷՆԷՍԻԷՆ։ 17 հոկտեմբերի։ Գեներալ Լէֆլօի արձանի բացման ժամանակ ներկայ էին մի քանի գեներալներ։ Իշխան Օրլով, որպէս ռուսաց դեսպանի ներկայացուցիչ, զովասանական ճառ արտասանեց ի պատիւ Լէֆլօի, որը նախապատրաստեց դաշնակցությունը երկու մեծ ազգերի մէջ, և Թագաւորի անունից ցանկացաւ Ֆրանսիայի և նրա փառաւոր զօրքի ծաղկումը։ Ճառին պատասխանեցին «Կեցցէ Ռուսաստանը, կեցցէ զօրքը» աղաղակներով։

ԼԷԴԻ-ՍՄԻԹ, 17 հոկտեմբերի։ «Բէյտէրի գործակալություն»։ Բօէրները աւելի սերտ կերպով շրջապատում են Լէդի-Սմիթը։ Քաղաքում քաղաքային վարչության մշտական բնակությունն չունեցող անձինք հրաման ստացան դուրս գալ քաղաքից։

ԴԱՐՄՇՏԱԴՏ, 17 հոկտեմբերի։ «Վօլֆի գործակալություն»։ Այսօր առաւօտեան Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին ներկայ էին ժամասացության ռուսաց եկեղեցում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 17 հոկտեմբերի։ Այսօր առաւօտեան ժամանեց այստեղ Մեծ Իշխան Թագաժառանգը, որին դիմաւորեցին ռուսաց և անգլիական դեսպանները։

ԼՕՆԴՕՆ, 18 հոկտեմբերի։ Վիլհէլմ կայսրը ուղարկեց գնդապետ Բուրնին, վաղը Աֆրիկա ուղևորվող 1-ին արքայական դրագունների գնդի հրամանատարին, որի շէֆն է կայսրը, հետեւեալ հեռագիրը. «Հաղորդեցէք գնդին իմ հրաժեշտի ողջոյնը, և թող վրրադառնան բոլորը առողջ և անվնաս»։

ՊԱՐԻԶ։ Հոկտեմբերի 18-ին։ Բարձրագոյն դատարանի յանձնաժողովը միաձայն վճռեց, հակառակ ընդհանուր պրօկուրօրի եզրակացու-

թիւններին, որ տեղիք չը կայ դատի ենթարկելու Դերուլէդին և նրա ընկերներին սպանութեան փորձ անելու համար, Բէյլի գործի մէջ, որովհետև այդ գործը արդէն վճռված է, և ապա, եօթը ձայնի մեծամասնութեամբ որոշեց դատի ենթարկել Դերուլէդին, Գեբենին, Բալիերին և Բարիլիէին, մեղադրելով նրանց դաւադրութեան մէջ, որովհետև Բէյլի գործից յետոյ քննութիւնը մերկացրեց նոր մեղադրական փաստեր։

ԼԷԳԻ-ՍՄԻԹ, հոկտեմբերի 18-ին։ «Բէյտէրի գործակալութիւն»։ Առաւօտեան 5 ժամ 30 րոպէին սկսվեց թնդանօթաձգութիւնը։ Բօէրները ռումբեր էին արձակում ծանր թնդանօթներից, բայց եօթը հարուածից յետոյ անգլիական բատարէաները ստիպեցին նրանց լռել։ Այս րոպէիս բօէրները գտնվում են անգլիացիների ձախ թևի վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2 ժ. ներքին և մասնական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպի, արեան և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարդելով. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
41—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՑՖԷԼԴ
Մաղերեան փողոց, № 5.
որ մասնագէտ է կաշու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վենէրական և սիֆիլիսի հիւանդութիւնների
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.
53—60

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
„Վանայ Սազ“
Բ. մաս
Գ. ՇԷՐԷՆՑԻ
Գինն է 75 կ.
Ա. և Բ. մասերը միասին 1 ր. 50 կոպէկ։
Գիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens.
8—10

Դաշնամուր համարեա բոլորովին նոր՝ ծախվում է 300 բուբլիով։ Հասցէն՝ Միքայէլեան պրոսպեկտ № 48, մուզիկային գործարան Գ. Ե. Կերբերի։
3—3



Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ՁՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագումի. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
14—100

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՆՈՐՈՒԹԻՒՆ
Օծանելիքներ
ԶՐԱՅԻՆ-ՇՈՒՇԱՆ
Սաստիկ և դուրեկան հոտ.
ՍԱՊՈՆ, ՕԾԱՆԵԼԻՔ ԵՒ ՓՈՇԻ։ Մ. 87676

ԲԱԳՈՒՈՒՄ
Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)
Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ
(քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)
Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից։ Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և բէալական դպրոց մտնելու համար։ Ուսումը սկված է սեպտեմբերի 6-ից։
Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆոնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի։
6—10

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵՍԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հարեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տէլէֆոն № 749), գործարան. տէլէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆոն № 451. (Ե. Հ. շ)



ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասսէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԷԼԷՖՕՆ № 642.
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։
ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ չինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։





ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։
ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։
ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. շ.) 46—100

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.
ՀԱՅԹԱՑԹՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ
ՕԾԱՆԵԼԻՔ
ԼԷՎԿՕՅ
Veillet blanc
ՀՈՏԱՒԷՏ ՁՈՒՐ ՍԱՊՈՆ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՁՈՒՐ ՊՈՒԴՐԱ.
Москва, Кузнецкій мостъ. Тверская, д. Спиридонова. С.-Петербургъ. Новскій, 18: Садовая 25.
М 51507 (2·)

Требуйте Везде
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и К° МОСКВА.
29—52 М. 35,967 (5)

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Октября 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.